Պարոն/Տիկին Ա. Ծերունյան *ին*

ստորաբաժանման ղեկավարի անուն, ազգանուն

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ պարոն Գ. Բաղրամյանին

Խնդրում եմ փեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխապակազմի սփորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապափրասփել հակիրճ զեկույց՝ գործակարգավար. խորհրդակցությանը ներկայացնելու համար

Տիկին Ն. Գաբրիելյանին՝ Ի գիփություն

Գ. Բաղրամյան ____________

«14» 06 2023թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Աշխատակիցների անունները, ազգանունները՝**

– Սեդա Շահինյան

– Սամվել Պետրոսյան,

2. **Զբաղեցրած պաշտոնը –**

- ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի անդամ

- հանձնաժողովի իրավաբանական և լիցենզավորման վարչության լիցենզավորման բաժնի պետ,

3. **Գործուղման վայրը և ժամկետները – Աթենք** (Հունաստան), համապատասխանաբար 2023 թվականի հունիսի 5-ից 8-ը և հունիսի 6-ից 9-ը.

4. **Հրավիրող կողմը (առկայության դեպքում) –** Էներգետիկ համայնքի քարտուղարության Էներգետիկայի եվրոպական կարգավորողների խորհուրդ (ECRB):

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը) –** էներգետիկ համայնքի կարգավորող խորհրդի (ECRB) էլեկտրաէներգիայի աշխատանքային խմբի 59-րդ հանդիպմանը և Էներգետիկ համայնքի էլեկտրաէներգիայի 28-րդ համաժողովին մասնակցություն.

6. **Քննարկված թեմաները (հարցերը) –** էլեկտրաէներգետիկական շուկաների զարգացումները էներգետիկ համայնքում և ԵՄ-ում.

7. **Հանդիպումները, ելույթները. – էներգետիկ համայնքի կարգավորող խորհրդի էլեկտրաէներգիայի աշխատանքային խմբի 59-րդ հանդիպումը** սկսվեց նախորդ հանդիպման արձանագրության հաստատմամբ, որից հետո խորհրդի կողմից ներկայացվեց

ԵՄ-ի և Էներգետիկ համայնքի էլեկտրաէներգետիկական շուկաներում տեղի ունեցած իրադարձությունները: Այնուհետև, մի շարք երկրների ներկայացուցիչների կողմից ներկայացվեց տվյալ երկրի շուկայում տեղի ունեցած օրենսդրական փոփոխությունները, ինչը ներկայացվեց նաև Հայաստանի մասով: Հանդիպման ընթացքում տեղի են ունեցել ծավալուն քննարկումներ ներկայացված թեմաների վերաբերյալ (հարց ու պատասխան):

Ուշագրավ էին հատկապես հետևյալ երկրների ներկայացուցիչների ելույթները.

Վրաստան. մշակվում է վերականգնվող ռեսուրսների հիման վրա արտադրված էլեկտրաէներգիայի ծագման երաշխիքի և կանաչ սերտիֆիկատների տրամադրման մեխանիզմների ներդրման վերաբերյալ օրենսդրությունը: Մշակվում են նաև հաղորդման ցանցային կանոնները՝ ԵՄ օրենսդրությանը համապատասխանեցնելու նպատակով: Վրաստանում շուկայի կոնցեպտը մշակում է կառավարությունը: Շուկայական մեխանիզմների ներդրումը փորձնական փուլում են, սույն թվականի հուլիսի 1-ից կմեկնարկի ազատական շուկան: Շուկայի կանոնները նախատեսում են էլեկտրաէներգետիկական շուկայի օպերատորի նշանակումը (NEMO) և արդեն հզորության փոխանակման մոդելը (power exchange) ամբողջությամբ կարող է գործել: Գների հետազոտման (price surge) և առավելագույն սակագների ներդրման մեխանիզմը երկրում ամբողջովին չի կարող գործել, քանի որ սահմանվել են բաշխման և ունիվերսալ ծառայությունների մատուցման երկարաժամկետ սակագներ:

Բոսնիայի և Հերցեգովինայի մասնակիցը նշեց, որ 2023 թվականից ներդրվել է վիրտուալ կայանի հասկացությունը: Էությունը կայանում է նրանում, որ փոքր՝ մինչև 1 ՄՎտ հզորությամբ արտադրողները, քանի որ նկատելի չեն համակարգի օպերատորի կողմից SCADA համակարգում, չեն կարողանում մուտք գործել շուկա, հետևաբար միավորվում են խմբերում, որպեսզի դառնան շուկայի մասնակից: Ներկայումս առկա է 7 խումբ 150 ՄՎտ հզորությամբ: Նրանք շուկա մուտք գործելու նպատակով հրաժարվել են աջակցման մեխանիզմից, սակայն հանդիսանում են հաշվեկշռման խումբ: Խմբի գործունեության համար լիցենզիա չի պահանջվում:

Ուկրաինա. էլեկտրաէներգիայի բաշխման սակագները երկու անգամ թանկացել են, միջոցներ են ձեռնարկվել սպառողների պաշտպանության նպատակով՝ արդյունքում մատակարարներից մեկի վրա դրվել է հանրային ծառայությունների մատուցման պարտավորություն (public service obligation): Ներդրվել և գործում է պրեմիում սակագնի և վերականգնվող ռեսուրսների հիման վրա արտադրված էլեկտրաէներգիայի ծագման երաշխիքի տրամադրման մեխանիզմները:

Կոսովո. Հասույթից կախված որոշ սպառողների կխրախուսվի անջատվել ունիվերսալ մատակարարից: Աջակցման մեխանիզմներ են մշակվում ակտիվ սպառողների նկատմամբ:

Շուկայի մոնիթորինգի արդյունքում կարող է տուգանք կիրառվել հաղորդողի, բաշխողի և խոշոր կայանների նկատմամբ: Սակագնի երկրորդ թանկացման որոշումը բողոքարկվել է դատական կարգով, սակայն սակագնի գործողությունը չի կասեցվել քանի որ ամբողջ համակարգը կսնանկանա:

Էներգետիկ համայնքի քարտուղարության կողմից նշվեց էներգետիկ համայնքում էնեգետիկայի 4-րդ փաթեթի ներդրման կարևորությունը, որը ևս կարող է դառնալ համայնքի ձեռքբերում (acquis communautaire), և մշակվում է այդ նպատակին հասնելու ուղեցույց: Նշվեց որ շուկայի օրենսդրության միասնականացման առնչությամբ ծագող հիմնահարցերից են նաև առևտրի գոտիների (bidding zone) վերանայումը, որից է կախված նաև տվյալ գոտում հզորության ծավալի 70 տոկոս պարտավորվածությունը հաշվի առնելը, որը նախատեսված է 4-րդ փաթեթով: Այդ գոտիների ընտրությունից է կախված նաև թափանցիկության կարգավորման պահանջների ապահովումը: Նշվեց, որ վերականգնվող էներգետիկայի ինտեգրացման նպատակով կարևոր դեր են խաղում խելացի հաշվառումը (smart metering) և էլեկտրաէներգիայի կուտակումը, սերտիֆիկացման և այլ խրախուսող մեխանիզմների ընդլայնումը:

Էներգետիկ համայնքի էլեկտրաէներգիայի 28-րդ համաժողովում կոչ արվեց էներգետիկ համայնքի պայմանագրային կողմերին որպես սպառման կրճատման էֆեկտիվ միջոց կիրառել բլոկային (խմբավորված) սակագներ: Էֆեկտիվ միջոց է նաև խելացի հաշվիչների (smart meters) կիրառումը, որը կհանգեցնի սպառման վերաբերյալ տեղեկացվածության բարձրացման, որն էլ իր հերթին կկրճատի սպառումը:

Համաժողովը կոչ արեց պայմանագրային կողմերին էներգետիկ 4-րդ փաթեթը կիրառել կողմերի երկրներում, որպեսզի այն ևս ընդգրկվի համայնքի ձեռքբերումներում (acquis communautaire):

Համաժողովի կողմից հավանության արժանացավ կարճաժամկետ շուկաների ռեֆորմը, որի արդյունքում հնարավոր կլինի գործողություններ ձեռնարկել կամայական սակագների կանխման ուղղությամբ, որով կամրապնդվի նաև ապագա շուկայի շարժի ակտիվացմանը և ներդրումների ներգրավմանը: Շուկայի շարժի ակտիվացմանը և կանխատեսելիությանը կնպաստի նաև վերականգնվող ռեսուրսից առաքվող էլեկտրաէներգիայի առուվաճառքի պայմանագրերի և պետության կողմից աջակցվող

տարբերությունների պայմանագրերի կնքմանը: Նշված գործիքները պետք է կիրառվեն էֆֆեկտիվ և մրցակցության զարգացման նպատակով:

Համաժողովը գտնում է, որ շուկայի միասնականացման հիմքում ընկած է նաև ռեգիոնալ համագործակցությունը, ուստի պայմանագրային կողմերի ուշադրությունն է հրավիրում հզորության տեղակայման և հաշվառման կարգավորմամբ սահմանված որոշակի դրույթների վրա՝ այդ թվում մեթոդոլոգիաների կիրառմանը:

8. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը – հետագա համագործակցություն և էլեկտրաէներգիայի աշխատանքային խմբի դասընթացներին մասնակցություն:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները -

Առաջարկվում է ՀՀ էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրի (մինչև 2040 թվականը) իրագործումն ապահովող ծրագիր-ժամանակացույցով նախատեսված «Էլեկտրաէներգետիկայի մասին» օրենքի նախագծի մշակման ժամանակ հաշվի առնել ԵՄ կարգավորումներով նախատեսված մուտքի իրավունքի, սպառողներին մատակարարման անխափանության (այդ թվում խոցելի սպառողների պաշտպանության) և այլ դրույթները: Առաջարկվում է նաև օրենսդրական հիմքի ստեղծում, որով էլեկտրաէներ-գիայի առուվաճառքի պայմանագրերի շրջանակում շուկայի մասնակիցներին հնարավո-րություն կտրվի կնքել տարբերությունների պայմանագիրը (contract for differences):

ԵՄ վերոնշյալ կարգավորումների կիրառումը, առանձին հարցերի քննարկմանը ՀՀ ներկայացուցիչների ներգրավումը կնպաստի հետագայում նշված կարգավորումներով սահմանված շուկայական մեխանիզմների ներդրումը Հայաստանում, ինչը կխթանի էլեկտրաէներգետիկ շուկայում մրցակցության զարգացմանը և կհանգեցնի արդյունավետության բարձրացմանը:

Գործուղվող ---------- 14.06.23թ. ***Ս. Շահինյան***

(ստորագրությունը, ամսաթիվը)

Գործուղվող ---------- 14.06.23թ. ---------- ***Ս. Պետրոսյան***

(ստորագրությունը, ամսաթիվը)

Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն
որոշման

Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը 368-ՀՆ

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը) Սեդա Շահինյան, ՀԾԿ հանձնաժողովի անդամ

4. Գործուղման վայրը՝ Աթենք /Հունաստան/

5. Գործուղման ժամկետները՝ 05.06.2023-08.06.2023թթ.

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝ ՀՀ պետական բյուջե

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը՝ ճանապարհածախս,գիշերավարձ: Հրավիրող կողմ՝ էներգետիկ համայնքի քարտուղարություն

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը՝ օրապահիկ

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

□ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		*Սեդա Շահինյան*	**Ընդամենը** (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)		
	Ավիատոմսի արժեքը (դրամ)		
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)		
	Վճարը 1 օրվա համար (դրամ)		
	Օրերի քանակը		
	Ընդամենը (դրամ)		
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)		
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	38,923.3	38.9
	Օրերի քանակը	4	4
	Ընդամենը (դրամ)	155,693	155.7
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար		
	Մուտքի արտոնագրի վճար		
	Այլ ծախսեր (*նկարագրել*)		
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		155.7	155.7

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը,

ամսաթիվը: 14.06.2023թ.

(հավելվածը լրաց. 23.03.23 N 326-Ն)

Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն
որոշման

Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՁՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը 367-Գք

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը) Սամվել Պետրոսյան, Իրավաբանական և լիցենզավորման վարչության, լիցենզավորման բաժնի պետ

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

4. Գործուղման վայրը՝ Աթենք /Հունաստան/

5. Գործուղման ժամկետները՝ 06.06.2023-09.06.2023թթ.

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝ ՀՀ պետական բյուջե

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը՝ ճանապարհածախս,գիշերավարձ: Հրավիրող կողմ՝ էներգետիկ համայնքի քարտուղարություն

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը՝ օրապահիկ

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

□ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		*Սամվել Պետրոսյան*	**Ընդամենը** (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)		
	Ավիատոմսի արժեքը (դրամ)		
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)		
	Վճարը 1 օրվա համար (դրամ)		
	Օրերի քանակը		
	Ընդամենը (դրամ)		
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)		
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	38,923.3	38.9
	Օրերի քանակը	4	4
	Ընդամենը (դրամ)	155,693	155.7
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար		
	Մուտքի արտոնագրի վճար		
	Այլ ծախսեր (*նկարագրել*)		
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		155.7	155.7

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը,

ամսաթիվը: 14.06.2023թ.

(հավելվածը լրաց. 23.03.23 N 326-Ն)